

Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ԿԶԾ-ից ՀԶԾ-ին անցման սոցիալական գործընկերության

Ներքոստորագրյալ կողմերը,

կարևորելով՝

«Հ-ում աղքատության հաղթահարման հիմնախնդիրը և դրան ուղղված Կայուն Զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԿԶԾ), ինչպես նաև Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ),

հանրային մասնակցությունը ԿԶԾ-ի և ՀԶԾ-ի մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը,

ԿԶԾ և ՀԶԾ մասնակցային գործընթացում սոցիալական գործընկերության միջոցով մասնակցության շարունակականության և արդյունավետության ապահովումը,

հաշվի առնելով՝

ԿԶԾ սոցիալական գործընկերության փորձը, ինչպես նաև ՀԶԾ գործընթացին անցնելիս սոցիալական գործընկերության անհրաժեշտությունը,

ԿԶԾ սոցիալական գործընկերության համաձայնագրի հիմքով ստեղծված ԿԶԾ սոցիալական համագործակցության ինստիտուտի կառույցների, սոցիալական գործընկերության կազմակերպության կառույցի սխեմատիկ պատկերի և կառույցի աշխատանքային կանոնակարգի առկայությունը,

հիմք ընդունելով՝

«Հ կառավարության կողմից սոցիալական գործընկերության շարունակմանն ուղղված բարի կամքը,

կնքում են սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հաստատելով իրենց պատրաստակամությունը, որպես շահագրգիռ կողմեր մասնակցելու ՀԶԾ

իրականացման՝ մշակման, իրագործման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

1. Սույն Հուշագրի նպատակն է՝ ՀԶԾ մշակման (ներառյալ ընթացիկ վերանայումներ), իրականացման, մոնիթորինգի ու գնահատման գործընթացների արդյունավետության բարձրացումը հանրության ակտիվ մասնակցության ապահովման միջոցով՝ հենվելով հասարակական տարբեր ոլորտները, հանրային ինստիտուտները, սոցիալական խմբերը և խավերը ներկայացնող սուբյեկտների միջև շահերի ներդաշնակեցման սկզբունքի վրա:

2. Կողմերը, որոնք ստորագրում են սույն Հուշագիրը, հաստատում են, որ իրենց վրա տարածվում են ԿԶԾ սոցիալական գործընկերության Համաձայնագրում ամրագրված կողմերի իրավունքներն ու պարտականությունները:


3. 2013 թվականի փետրվարի 25-ին ԿԶԾ-ի քաղաքացիական համագործակցության ցանցի խորհրդի որոշմամբ ԿԶԾ սոցիալական գործընկերության Համաձայնագիրը ստորագրած կողմերը միանում են սույն Հուշագրին և հանդիսանում են սույն Հուշագրի կողմ:

4. Սույն Հուշագիրը բաց է համարվում, և Կողմը, ով ստորագրում է սույն Հուշագիրը կարող է մասնակցել Հուշագրի նպատակի իրականացմանը:

5. Սույն Հուշագրի գործողությունը դադարում է Կողմերի համար մինչև ծրագրի ավարտը 2025թ., իսկ Կողմի համար եթե Կողմը հրաժարվում է շարունակել գործընկերությունը:

Ստորագրող կողմեր.

Հայաստանի Հանրապետության
կառավարություն
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար
Վաչե Գաբրիելյան



ԿԶԾ/ՀԶԾ Քաղաքացիական
համագործակցության ցանցի խորհուրդ
նախագահ
Սարգիս Սեդրակյան

